

ԾՐԱԳԻՐ

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու հանգամանքով պայմանավորված բուսասանիտարիայի բնագավառում ընդունվող փաստաթղթերի մշակման, քննարկվող հարցերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշման ձևավորման, դրանց հիմնավորման, առաջարկությունների ներկայացման համար նպատակահարմար է ներգրավել փորձագետ:

Փորձագետը ուսումնասիրում և վերլուծում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից պատրաստված բուսասանիտարիայի ոլորտի իրավական ակտերի նախագծերը և ներկայացնում առաջարկություններ և կարծիք դրանց վերաբերյալ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության շահերը, մասնակցում է Եվրասիական տնտեսական միության փաստաթղթերի մշակմանը, հիմնավորում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից բարձրացվող բուսասանիտարիայի ոլորտի հրատապ հարցերի վերաբերյալ, մասնակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից պարբերաբար կազմակերպվող տեսակոնֆերանսներին, սեմինարներին և աշխատանքային այլ քննարկումներին:

Փորձագետը սույն ծրագրով կատարման ենթակա աշխատանքներն իրականացնում է մեկ տարի ժամկետով:

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում:

Փորձագետը սույն ծրագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ վեց ամիսը մեկ անգամ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը, անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք է հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները:

Սույն ծրագրի իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

- ագրոնոմիական կամ կենսաբանություն կամ բույսերի պաշտպանություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
- առնվազն տասը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- հայերեն և ռուսերեն լեզուների իմացություն,
- համակարգչով աշխատելու ունակություն,
- «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի, «Բուսասանիտարիայի մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքների իմացություն: